Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11003/24-ԼՃ պայմանագրի

**ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 3**

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 13.Լոռու մարզ - ճաշարան |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.07.-30.09.2024թթ. |
| Ներկայացման օր | 01.10.2024թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Սիրանուշ Սողոմոնյան<br>Թիմ լիդեր |

Digitally signed by
MKHITARYAN
YERVAND
2508730335
Date: 2024.10.07
11:26:45 AMT

2. Բովանդակային հաշվետվություն

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սննդի (տաք ճաշ) տրամադրման ծառայության շրջանակներում՝ կազմակերպության նախագահի կողմից հաստատված ճաշացանկով, ճաշարանում շաբաթական 5 օր տրվել է տաք ճաշ, ինչպես նաև սուրճ, միրգ և քաղցրավենիք: Հաշվետու ժամանակահատվածում ծառայությունից օգտվել է 101 շահառու:
- Սոցիալական խորհրդատվության տրամադրման շրջանակներում համակարգող/սոցիալական աշխատողը ճաշարան դիմող անձանց տեղեկատվություն է տրամադրել ճաշարանից օգտվելու կարգի վերաբերյալ, վերահսկել ճաշարան հաճախող շահառուների հաճախելիությունը, ճշտել բացակայությունների պատճառները, անհրաժեշտության դեպքում իրականացրել տնայցեր: Համակարգող/սոցիալական աշխատողը պարբերաբար խորհրդատվություն է տրամադրել շահառուներին իրենց իրավունքների, համայնքում գործող սոցիալական ծրագրերի վերաբերյալ: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականացվել է **5** դեպքի վարում (Անվճար վիրահատության կազմակերպում, սառնարանի ձեռքբերման կազմակերպում, վերափաստագրման կազմակերպում, գրենական պիտույքների անվճար ձեռքբերման կազմակերպում), 32 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
- Այլ ծառայությունների տրամադրում.
  - Շփման և զբաղվածության կարիք ունեցող 40 շահառուներ մասնակցել են կենտրոնում գործող հետևյալ խմբակներին՝ գրական, հոգեբանական, երգ, նկարչական, առողջապահական, հմուտ ձեռքեր:
  - Ճաշարանի 70 շահառու մասնակցել են կենտրոնում կազմակերպված հետևյալ միջոցառումներին՝ «Սահմանադրության օր», «Վարդավառի տոնակատարություն», Ծննդյան օրվա նշում:
  - «Կյանքի բարելավում համապարփակ սոցիալական, առողջապահական, մարդասիրական նախաձեռնությունների և իրավունքների իրազեկման արշավների միջոցով» ծրագրի շրջանակներում կազմակերպվեց էքսկուրսիա դեպի Գյումրի, Դիլիջան, որին մասնակցել են Սպիտակ համայնքի 7 տարեց շահառու:
  - UNHCR Armenia-ի կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում բարեգործական ճաշարանի 101 շահառուի տրամադրվել է սպորտային հագուստ:
  - Կազմակերպվել են թվով 12 հանդիպումներ Ալավերդու տարածաշրջանի հոգևոր հովիվ՝ Տեր Միքայել քահանա Շաղոյանի, Սպիտակի հոգևոր հովիվ՝ Տեր Օվսեի հետ:
  - Բուժքրոջ կողմից իրականացվել են դասընթացներ հետևյալ թեմաներով՝ «Սրտի ստենոկարդիա», «Անմիզապահություն», «Շաքարային դիաբետ»:
  - Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել են հետևյալ թեմաներով՝ «Եռամսյակային հրատապ օգնություն», «Ինչպես կոտրել վիրավորանքը գույներով», «Սոցիալական պաշտպանվածություն», «Նպաստների համակարգը ՀՀ-ում» «Ինչպես հաղթահարել վիրավորանքը», «Տարիքին բնորոշ նախասիրությունները»:

- Հոգեբանի կողմից իրականացվել են խմբային հանդիպումներ ուղղված՝ տարիքային առանձնահատկությունների զարգացմանը, ուղեղի վարժանքին, տարիքին բնորոշ առանձնահատկությունների զարգացմանը, հուզակամային վիճակի հետ կապված մետաֆորիկ քարտերով աշխատանքին, միջանձնային հարաբերություններում կոնֆլիկտի հաղթահարման ուղիներին, կոգնիտիվ ոլորտի գնահատմանը՝ զարգացմանը, արտաքին անբարենպաստ պայմաններում անհատի կոպինգին՝ մեխանիզմների օգտագործման գնահատմանը:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- Էքսկուրսիա դեպի Գյումրի, Դիլիջան (տե՛ս հետևյալ հղումներով՝ http://surl.li/ebmlvn),
- Ալավերդու ցերեկային կենտրոնում շահառուի ծննդյան տարեդարձի նշում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/ukmndg),
- Հոգևոր հովիվ՝ Տեր Միքայել քահանա Շաղոյանի հյուրընկալումը Ալավերդու ցերեկային կենտրոնում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/ibjfxf),
- Շահառուի 61 ամյակի նշում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/vdhjiu),
- Հանդիպում «Լոռու արվեստագետներ» ֆիլմաշարի հեղինակ և ռեժիսոր Իվան Անտոնյանի հետ (տե՛ս հետևյալ հղմամբ http://surl.li/igrtrw),
- Հոգեբանական դասընթաց (տե՛ս հետևյալ հղմամբ http://surl.li/kbhwdu),
- Հյուրընկալում Հ. Աբելյանի անվան դրամատիկական թատրոնի դերասան Էդգար Քոչարյանին Վանաձորի կենտրոնում (տե՛ս հետևյալ հղմամբ http://surl.li/vlvwnu),
- Մեր առօրյան (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/efizbt),
- Վանաձորի առաջնորդանիստ Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցում 3 շահառուների 6 երեխաների գրենական պիտույքների փաթեթի ստացումը (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/efizbt):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Հաշվետու ժամանակահատվածում բարեգործական ճաշարանի բոլոր աշխատակիցները մասնակցել են «Առաքելութուն Հայաստան» ԲՀԿ կենտրոնական գրասենյակի կողմից կազմակերպված թիմ բիլդինգին՝ ուղղված Կազմակերպության ողջ անձնակազմի թիմային ոգու բարձրացմանը, փորձի փոխանակմանը:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ճաշարանի

շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 100/101 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 65 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 39 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 18 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 5 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 35 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 62 |
| 1.4 | երեխաներ (միայն ճաշարանի պարագայում) | 0 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 101 |
| 3. | Այլ ծառայություն (նշել) Ժամանցի կազմակերպում | 70 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «01» 10 .2024թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)